

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

13. 11. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Մ. Սայադյանը, Ա. Ջանազյանը, Ժ. Ղազարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերոյանը, Ս. Ղուբաթյանը, Ս. Խալաթյանը, Ն. Սարգսյանը, Հ. Մկրտչյանը, Ա. Սահակյանը -մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ .Ասլանյանը -մարզպետի խորհրդական
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Հ. Անտոնյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության պետ
- Ս. Դարբինյանը - Վանաձորի քաղաքապետ
- Գ. Սարգսյանը - „ՀԷՑ,, ՓԲԸ-ի „Դեբետ,, մասնաճյուղի տնօրեն

Օր ա կ ա ր գ ու մ`

Նախորդ օրերի ընթացքում Լոռու մարզում քամու պատճառած վնասների վերաբերյալ

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց`

1. Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ. Մանուչարյանին՝ ա/Առաջարկել գյուղական համայնքների ղեկավարներին իրենց կողմից ստեղծված հանձնայողովների միջոցով պարզել քամու հետևանքով պատճառված վնասների չափը ըստ գյուղացիական և այլ տնտեսությունների, անհատական ձևով և սահմանված կարգով ներկայացնել տեղեկատվություն , անհրաժեշտության դեպքում կցելով նաև լուսանկարներ և այլ փաստաթղթեր:
բ/ Առաջարկել քաղաքային համայնքների ղեկավարներին համատիրությունների հետ միասին, հաշվառել քաղաքային տնտեսություններին հասցված վնասների չափը և ներկայացնել տեղեկատվություն:
2. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ. Սայադյանին՝
Անհրաժեշտ հսկողություն սահմանել մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում ուսումնական պրոցեսը անխափան դարձնելու ուղղությամբ, որը կարող է կապված լինել քամու պատճառած վնասների հետ:

ԼՈՐՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ